

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



Հայ ժողովրդի պատմության քառուղիներում գիրքն ու գրատպությունը դարձել են ազգափրկիչ օղակներ՝ սերունդներին փոխանցելով պատմական փաստերն ու գիտական ձեռքբերումները: Հայ տպագրության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը:

2017 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի ազգային գրադարանի հյուրընկալ հարկի ներքո բացվեց Գրատպության թանգարանը՝ հայ տպագրության պատմությունն արտացոլելով **Գրի ակունքները, Հայոց այբուբենը, Հայ գրատպության առաջնեկները, Հայկական գրատպության սփյուռքը, Գրահրատարակչություն, Գրի հավերժությունը** սրահների ցուցափեղկերում: Թանգարանի ստեղծման գաղափարը ծագել է 2012 թ., երբ լրացավ հայ գրքի տպագրության 500-ամյակը: Նույն թվականին **ՅՈՒՆԵՍԿՕ**-ն Երևանը հռչակեց Գրքի համաշխարհային մայրաքաղաք: Գրատպության թանգարանը բացվեց Հայաստանի ազգային

գրադարանում, քանի որ այն համարվում է հայերեն տպագիր նյութի ամենամեծ



պահոցը: Թանգարանի տարբեր սրահներում առանձնահատուկ տեղ հատկացվեց հայ տպագրության գոհարների ցուցադրությանը՝ հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը» (Վենետիկ, 1512 թ.), առաջին տպագիր Աստվածաշունչը (Ամստերդամ, 1666-1668 թթ.), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (Ամստերդամ, 1695 թ.), առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարարը» (Մադրաս, 1794-1796 թթ.) և այլ արժեքավոր տպագրություններ:

21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ, կարևորելով նաև հայ գրքի ռազմավարական նշանակությունը, աշխատանքներ են տարվում ստեղծելու և ձևավորելու համահայկական թվային գրադարան, որի նպատակը գրքի երկարաժամկետ պահպանությունը և հասանելիությունը ապահովելն է:

Գրատպության թանգարանը հագեցած է նոր տեխնոլոգիաներով, ինչը ստեղծում է ոչ ֆորմալ կրթության ինտերակտիվ միջավայր:

Թանգարանը միտում ունի դառնալու հայ գրքի հետազոտման կենտրոն:

Հայ տպագրության պատմությունն արտացոլված է Գրատպության թանգարանի վեց սրահներում՝



Գրի ակունքները սրահում ներկայացված է նախագրային շրջանից մինչև գիրն ընկած ժամանակահատվածում ստեղծված գրավոր մշակույթի նմուշներ՝ ժայռապատկերներ, սեպագիր արձանագրություններ:

Հայոց այբուբենը սրահում ներկայացված են գրչության տեսակները և եվրոպացի հրատարակիչների գրքերում փայտափորագիր հայոց այբուբենը:

Հայ գրադպության առաջնեկները սրահում ներկայացված են հայերեն տպագիր առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը» (Վենետիկ, 1512թ.), Աստվածաշունչը (Ամստերդամ, 1666-1668թթ.), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշ-



խարհացոյցը» (Ամստերդամ, 1695թ.), առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարարը» (Մադրաս, 1794-96թթ.):

Հայկական գրադարան սփյուռքը սրահում ներկայացված են այն հիմնական օջախները, որտեղ գործել են հայկական տպարաններ և տպագրվել են հայերեն գրքեր: Սրահում կարելի է ծանոթանալ տպագրավայրերի

համառոտ պատմությանը:

Գրահրապարակչություն սրահում ցուցադրված են տպագրական մեքենաներ, կլիշեներ, տարբեր երկրներում գործած հայկական տպարանների նկարներ: Հոլոգրաֆիկ ցուցադրության միջոցով ներկայացված են տպագրության հիմնական ձևերը:



15:45, 25 Սեպտեմբեր, 2017

Գրի հավերժությունը սրահում ներկայացված է տպագրության սկզբնավորումը ներկայիս Հայաստանի տարածքում:

Ցուցադրված են Հայաստանի և Արցախի մամուլի եզակի նմուշներ:

Թանգարանը կոչված է ծառայելու հանրությանն ու նրա զարգացմանը: Այն ցուցադրում է մարդկության ժառանգությունը՝ կրթության, ուսումնասիրության և ժամանցի կազմակերպման նպատակներով: Թանգարանը հանդես էր գալիս որպես մարդկության հավաքական հիշողության կրող և հանրության լայն զանգվածներին գիտելիք հաղորդող հարուստ կենտրոն:

THE MUSEUM OF PRINTING

In 2012 Yerevan was declared World Book Capital by **UNESCO**, and the 500th anniversary of the Armenian Book Printing was celebrated. During these events, it was agreed to establish the Museum of Printing. The museum creates in the Armenian National library which is the largest cache of Armenian printed.

On September 25, 2017, the Museum of Printing was established in the Armenian National Library.

The museum consists of six exhibition halls.

Amongst the exponents are: the first Armenian printed book Urbatagirq “The Friday Book” (1512, Venice), the first Armenian printed Bible (1666, Amsterdam), the first Armenian printed map (1695, Amsterdam), the first printed Armenian periodical “Azdarar” (1794 - 1796, Madras) and more.

In the museum the visitor will be acquainted with the first introductions of woodcut Armenian alphabet in European publications, exhibits on antique books, history of Armenian printing, printing presses, clichés.

Some exponents are being displayed with the use of computer technologies. These creates an interactive environment for informal education.

The museum is serving as an educational hub for high school and University students.

It will become a Book&Binding research center.